

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԵՐԻՔՆԵՐ ԱՐԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք ՝ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէից).

Յայտարարութիւն ընդունվում է առէն լիզումով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանկիւր տողաւորին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք ՝ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք էլ պէտք է գործենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Փոքրիկ նկատողութիւններ. Հայոց
թաւրոն. Նամակ Բագուից. Նամակ Կարսից.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵ-
ՐԱԳԻՆՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐԱՌԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից:

ՄԵՆՔ ԷՆ ՊԵՏԻ Ե ԳՈՐԾԵՆՔ

Անգլիայից այս օրերս Ռուսաստան
պէտք է գան տասներկու խոշոր առե-
տրական տների ներկայացուցիչներ մի
շարք գործնական հարցեր ուսումնասիրե-
լու համար: Նրանց նպատակն է ձիւղ
գաղափար կազմել, թէ գիւղատնտեսական
ինչ արդիւններ կարելի է Ռուսաստանից
արտահանել դէպի Անգլիա:

Երկու տարի սրանից առաջ զարմեալ
Անգլիայից եկել էին երկու անձն, որոն-
ցից մէկը պարսկական անգամ, իսկ միւսը
մասնագէտ անասնաբոյժ, ընկելու այն
հարցը, թէ արդեօք կարելի է Ռուսաս-
տանից Անգլիա տանել միս, որը անգլիա-
կան վաճառանոցում շատ բարձր գին ու-
նի: Նրանք եկան այն եզրակացութեան,
որ Ռուսաստանի մէջ եղած կենդանիների
միսը անգլիական տնտեսիկով շատ է կո-
պիտ եւ անբաւարար: Ռուսաստանը պէտք
է բարեփոխել իր անասնապահութիւնը,
որպէս զի կարող լինի անարգել կերպով
մեծ քանակութեամբ միս արտահանել դէ-
պի Անգլիա: Այդ ներկայացուցիչները այ-
ցիւնցին եւ Հիւսիսային Կովկասը, որտեղ
անասնապահութիւնը բաւական զարգա-
ցած է:

Նոր ներկայացուցիչները, որոնք շուտով
պէտք է գան Ռուսաստան, աչքի առաջ

ունեն նորնպէս զարգւել այն հարցով, թէ
ինչ ձևով կարելի է լինի Ռուսաստանից
արտահանել անասնապահութեան եւ կաթ-
նատնտեսութեան արդիւնները:

Կովկասը կարող է նորնպէս մի քանի
միջոցներ արտահանել դէպի Անգլիա:
Հիւսիսային Կովկասը կարող է արտահա-
նել մսացու կենդանիներ, Անգլիոյվար
մսացու ոչխարներ, կաթնատնտեսական
արդիւններ եւ անային թռչուններ: Գու-
թային նահանգը արդէն մի քանի տարի
է, որ մեծ քանակութեամբ անային թռչ-
ուններ է արտահանում դէպի արտասահ-
մանեան վաճառանոցը եւ ներկայումս ըն-
դարձակում է իր թռչնապահութիւնը:
Անգլիոյվար տանեակ տարիներ շա-
րունակ արտահանվում էին մսացու ոչ-
խարներ դէպի Իտալիայի եւ Հայկէսի
կողմերը: Անգլիոյվար տնտեսական երկաթուղու
շինելուց յետոյ մեր երկրից մեծ քանա-
կութեամբ հաւկիթներ են ուղարկվում
Իտալիա միւսում: Դրանով դէպի արտասահ-
ման Թիֆլիսում նորերս կայացած ժողովներից
մէկում պարզվեց, որ մեր երկիրը կարող
է ուղարկել արտասահման գանալան տե-
սակ պանիրներ եւ իւղ, եթէ ջանքեր անել
կազմակերպելու այդ գործը խելացի կեր-
պով:

Այժմ, երբ իրանք օտարագիրները գա-
լիս են մեր երկրները եւ իրանց կողմից
խոստանում են ամեն տեսակ դիւրութիւն-
ներ ընծայել մշտական տնտեսական կապ
հաստատելու նրանց եւ մեր մէջ, երբ նը-
րանց շնորհիւ մեր երկրի արդիւնները
գին են ստանում վաճառանոցում, ան-
հրաժեշտ է, որ մենք թողնենք մեր հին,
հայնապաշտ կամ անշարժ գործադարութիւնը
եւ ձեռնարկենք անելի եռանդուն եւ ներ-
գործական միջոցների կազմակերպելու մեր

տնտեսական կեանքը նոր տնտեսական
պայմանների, նոր պահանջների հիման
վրա: Ժամանակն է, որ մեր գործողները
խմբվեն միասին խորհրդակցելու եւ գոր-
ծելու. ժամանակն է, որ Գիւղատնտեսա-
կան ընկերութեան նման հիմնադրութիւն-
ներ ստեղծական կերպով եւ հաստատ-
կազմակերպութեամբ օգնեն մեր երկրի
ժողովրդին յաղթութեամբ դուրս գալու
տնտեսական այն խառնափնթոր վիճակից,
որի մէջ նա ներկայումս գտնվում է:

Այստեղով թէ արտաքին եւ թէ ներ-
քին վաճառանոցներում բռնելու հաստատ
եւ պատուաւոր դիրք, մենք կը տանք մեր
արդիւնաբերութեան կուլտուրական ոյժ,
որը կը դառնայ անխորտակելի, եթէ մենք
կը շարունակենք կատարելագործել ար-
հեստը եւ բարձրացնել մեր ժողովրդական
աշխատանքի բարեկեցութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻՆ ՆԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գործակատարների դատակարար կամաց-կա-
մաց կերպարանափոխում է. այժմ յաճախ
գործակատարները մէջ պատահում են մար-
դիկ, որոնք ոչ թէ ամեն բազմ մասնում են
գանալան կեղտոտ միջոցներով իրանց հարա-
տացին, այլ հոգում են ուրիշների մասին,
մասնում են հասարակութեան օգտակար ան-
դամ լինելու մասին: Այո, անարգել զատա-
կարգի մէջ այժմ կարելի է գտնել մի շարք
հասարակական գործիչներ, լրագրական աշխա-
տակիցներ եւ այլն: Յիշված երեւոյթին շատ
նպաստեցին խոշոր արդիւնաբերական եւ գոր-
ծարանական ձեռնարկութիւնները, որոնց հիմ-
նադրները լինելով զարգացած եւ կրթված
մարդիկ՝ հրաւիրեցին ծառայութեան եւ զար-

գացած ու կրթված գործակատարներ. գործա-
կատարների մի մեծ ձեւը՝ հաշտակալները՝
համարեա բոլորը քիչ թէ շատ կրթված մար-
դիկ են, իսկ վերջերս աւելացաւ մի ուրիշ կեն-
սունակ տարր գործակատարների շարքում—
մեր նախկին ուսուցիչները: Ուստի շատ բնա-
կան է, որ ընթացած եւ ներկայումս գործակատա-
րական միջոցաւ այս հասանքի ազդեցութեան
տակ կերպարանափոխվել: Դրա ապացոյցներից
մէկը մենք համարում ենք նորերս հաստատ-
ված «Գործակատարների փոխադարձ օգնու-
թեան ընկերութիւնը», որի առաջին ընդհանուր
ժողովը կը կայանայ առաջիկայ կիրակի օրը:

Այս ընկերութիւնը, բացի այն, որ օգնու-
թեան կը հասնէ չքաւոր գործակատարներին,
տալով դրամական օժանդակութիւն անգործու-
թեան կամ ծերութեան դէպքում, կը տայ
բժշկական օգնութիւն, կը առաջին ընդհանուր
դատակարար համար, կը հիմնէ գրադարան,
ուսումնարաններ եւ այլն, այլ նաեւ կը լինի մի
բարերար միջոց մեր գանալան խաւերի
գործակատարներին միմեանց հետ շփվելու, ծա-
նոթացնելու, ինչպէս նաեւ փոքր ի շատ զա-
ղափարական հասանք պատուաւորեալ այն ա-
հագին թւով գործակատարների մէջ, որոնք
ընկնելով վաճառականական ապարդէզ երեսայ
հասակից, հին, մութ, խաւար հասկացողու-
թիւնների մէջ են խրված: Այս տեսակէտից
խիստ ցանկալի է, որ ընկերութեան նախա-
ձեռնողները աշխատեն անդամներ թիւ մէջ
մտցնել նաեւ Թաւաշիկի ջարմանարայի,
Ժաճկած բազալխանայի եւ այլ հին ձեւի վա-
ճառականների գործակատարներին:

Մեր նախորդ յօդուածներից մէկում, խօսե-
լով ընկերական թանգութեան մասին, իրեւ
այդ ցաւը թեթեւացնելու միջոց, առա-
ջարկել էինք չունեւորներին փոքրիկ, միացած
ոյժերով կազմել մեծ գումարներ ակցիոներու-
կան հիմունքների վրա եւ այդպիսով կառու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Հայ պիգի, նոյեմբերի 10-ին

Գերմանական ընդհանուր բարոյագիտական
ընկերութիւնը (der allgemeine deutschen Sitt-
lichkeitsverein) մէկն է գերմանական այն բազ-
մաթիւ ընկերական կազմակերպութիւններից,
որոնք ծառայում են համայն ազգաբնակչութեան
չանքին: Բարոյագիտական ընկերութիւնը ա-
ռանձնապէս վայելում է կառավարութեան խը-
նամբն ու հովանաւորութիւնը, իրենք մի ըն-
կերութիւն, որ իր գործունէութեան ծրագրում
ընդգրկում է ժողովրդի բոլոր բարոյական խըն-
դիրները, գործ ունի նրա կեանքի, նրա հոգու
նուրը ու քնքոյզ կողմերի հետ: Այդ ընկերու-
թիւնը խիստ մեծ ծաւալ ունի Գերմանիայում,
այնպէս որ այսօր գրեթէ բոլոր գլխաւոր քա-
ղաքներում կան նրա կենտրոնական ձեւերը:
Ինչպէս են Բեռլին, Դրեզդեն, Միւնխեն, Լայպ-
ցիգ, Բրեսլաւ, Հայլե, Բրաունշվայց, Ֆրանկ-
ֆուրտ Մայնի վրա, Ֆրանկֆուրտ Օդերի վրա,
Համբուրգ, Հաննովեր, Մագդեբուրգ, Շտրաս-
բուրգ եւ այլն: Իսկ փոքրիկ քաղաքներում
եւ անգամ մեծ գիւղերում ունի իր երկրոր-
դական փոքրիկ ձեւերը:

Ընկերութեան հիմնական նպատակն է՝ մի
կողմից դիմադրել ժամանակի աւերիչ հոսանք-
ներին, որոնք վտանգ են նպաստում բարոյա-
կանութեան, իսկ միւս կողմից վառ պահել ժո-
ղովրդի բոլոր խաւերում հասարակական բա-
րոյական աշխարհայեցողութեան զգացումը,
զարկ տալ ընտանեկան-ամուսնական կեանքի
պահպանման, զարգացման: Իսկ այդ նպատա-
կին հասնելու համար, միակ ջանքն է բանա-
կին եւ գրաւոր կերպով—յաճախ տեղի ունե-
ցող հրապարակական ժողովներում եւ զուտ
ընկերական ձեռնարկութեամբ հրատարակ-
վող օրգանների («Korrespondenzblatt» եւ

«Fragenblätter») միջոցով—պարզաբանել օր եւ
է վնասակար երեւոյթի ծագման իսկական
պատճառները, յորդ տալ ժողովրդին այս կամ
այն դէպքում վարվելու միջոցները եւ այլն:
Եւ մի այդպիսի պատասխանատու նպատակ ի-
րագործելու համար, գործի գլուխ են անցած,
իրեն կենտրոնական վարչութեան ղեկավար
անդամներ, պետական բարձր պաշտօնեաներ,
նշանաւոր պրոֆէսորներ, ինչպէս են պրոֆէ-
սորներ Վուլտը, Զոմ, Կիրն եւ այլն, միջնա-
կարգ դպրոցների վերապետներ, պալատա-
կան քարտիչներ եւ այլ յայտնի պատասխան-
ընկերութեան նախաձեռնութեամբ հրատա-
րակվող թերթերը, որոնց ձեռնակցում են նը-
շանաւոր հրապարակախոսներ, իրաւաբաններ
եւ բժիշկներ, ուղղակի եւ անմիջապէս ծառա-
յում են ընկերութեան նպատակին: «Korres-
pondenzblatt» ամսագիրը նպատակ ունի կաւել
հրապարակական անբարոյական արարքների,
ազնիւ երեւոյթների դէմ, իսկ «Fragenblätter»
թերթը, ինչպէս անունն էլ վկայում է, ոյժ է
տալիս կանանց սեռի բարոյականութեան զար-
գացման:

Նախ քան Հայպիգի կոնֆերենցիայի մասին
խօսելը, աւելորդ չեմ համարում մի քանի խօս-
քով նկատել բարոյագիտական ընկերութեան
վերաբերման մի հանգամանք:

Գերմանական ընդհանուր բարոյագիտական
ընկերութեան մէջ մօտ ժամանակներում առա-
ջացել է մի կուսակցութիւն, բայց կուսակցու-
թիւն դեռ ժամանակ, օաղմային վիճակում, ու-
րիշ խօսքով դեռ եւս կարծիքների թեթեւ ծը-
րում, այնպէս որ երկու կուսակցութիւնների
ընդհանուր վարչութիւնը դեռ մի եւ նոյնն է:
պաշտօնական յարաբերութիւնները դեռ եւս
անբաժան, սակայն կոբւ, մրցում նկատվում է
նրանց հրապարակով արտայայտած մտքերի
մէջ: Առաջինը, աւելի ստուար բազմութիւնը,
հնութեան փեղիք պիւրը բռնած, իր ամբողջ
գործունէութիւնը հիմնում է Աւետարանի վրա,
որից զուտ ոչ մի ուրիշ բան նա չէ ուզում
ձանաչել, եւ յանուն բարոյականութեան առ-

րածվող ամեն մի նոր հոսանք, ինչպէս էլ ու-
զում է լինի, եթէ հակառակ է Աւետարանի
այս կամ այն սկզբունքին, նա հրատարակում
է որպէս անբարոյականութիւն: Նրա վախճա-
նական նպատակն է իրականացրած տեսնել
Աւետարանի սկզբունքները կեանքի մէջ: Իսկ
երկրորդ փոքրաթիւ, սակայն ուժեղ եւ ապա-
գայ խոստացող կուսակցութիւնը, ընդհակա-
ռակը, ամենեւեւ զերծ չը թողնելով Աւետա-
րանը, հակում ունի մի եւ նոյն ժամանակ բնա-
կան օաճիւնների մէջ ձեւակերպել իր գործու-
նէութեան ընթացքը: Նա կոյր ֆանատիկոսու-
թեամբ չէ ուզում հալածել այն բոլոր նորա-
ծին բարոյական աշխարհայեցողութիւնները,
որոնք արդիւնք են քրիստոնէութիւնից յետոյ
կացած, մասնաւոր նոր դարերի նշանաւոր բա-
րոյագէտների: Նա վարդապետում է, եթէ
համառօտ ձեւակերպենք, այսպէս. «Հայտնե-
նի քրիստոնէական գաղափարները բնա-
կան աշխարհայեցողութեան հետ, բարոյա-
կան հողի վրա, եւ այդ միջոցով ընկալան
իրերին համեմատել ընթացք տալ. այս է նրա
ուսմունքի բանաձեւը: «Հայտնեցիք ասելով,
նա ի հարկէ, նպատակ չունի անհամապատաս-
խան կէտերից բռնադատել յերիւրեւմեան
անիւ, այլ այն, որ հնացած, կեանքի պահանջ-
ների համար անպէտք սկզբունքը դէն ձգելով,
պէտք է թերին լրացնել նոր, բնական եւ հա-
մադեցողիչ բարոյական հայեցակէտով եւ մի
այդպիսի կուսակցութիւն, որի նման, եւ դեռ
աւելին է մտածում լուսաւոր աշխարհի ամբողջ
կրթված եւ ուսումնական դասը, ինչ կասկած,
որ ամբողջ ապագայում կը ջանջվեն իր սեռա-
քանակ հակառակորդին, եւ այն ժամանակ
միայն իր դրօշակը կը ծածանէ համայն Գեր-
մանիայում:

Այժմ անցնենք կոնֆերենցիային:
Ամբողջ կոնֆերենցիայի ընթացքում տեղի
ունեցան երեք հրապարակական ժողովներ:
Առաջինը հոկտեմբերի 27-ին, երեկոյան, ըն-
կերութեան ընդարձակ դահլիճում, երկուս
դատակարար համար, երեկոյ էին 400 հոգի:

Առաւօտեան, հոկտեմբերի 28-ին, կայացաւ վար-
չութեան ընտրութիւնը, իսկ նոյն օրը երե-
կոյան երկու հրապարակական ժողովներ միա-
ժամանակ, մէկը զուտ կանանց համար, զար-
ձեալ նոյն դահլիճում, ուր ներկայ էին կա-
նանց սեռից 600 հոգի, իսկ միւսը քաղաքա-
յին կենդանաբանական այգու անգինն եւ չը-
քեղ դահլիճում, միայն արական սեռի համար,
ուր ներկայ էին 8500 հոգի: Յարգել օրը,
ամսի 28-ին, կատարվեց ընդհանուր հաշուե-
տուութիւն, իսկ կէսօրին եղաւ հասարակաց ճաշ:

Այստեղ մանրամասն կանգ առնել դատա-
խօսութիւնների բովանդակութեան վրա աւե-
լորդ եմ համարում, միայն ուշադրութեան
կանանք ամսի 28-ին, արական սեռին յատ-
կացած ժողովում արտասանած երկու դա-
տախօսութիւնները, որոնք ընդհանուր առ-
մամբ աւելի, քան մնացածները, հետաքրքրի
են: «Գերմանացի եւ բարոյականութիւնը»
(Der deutsche Mann und die sittlichkeit)—պա-
լատական գաղափար խորհրդական յայտնի իրա-
ւաբան պրոֆէսոր Զոմի. «Ինչ է ուսուցա-
նում ներկայումս սկանդալների առումը» (Was
lehren die skandalprozesse der Gegenwart)—
Բեռլինի պալատական քարոյիչ Շտոկերի
ի միջի այլոց իրեւմ եւ կանանց ժողովում
կարգաւորված դատախօսութիւնների վերաբեր-
ւորը. «Կանանց իրաւունքն ու ծառայութիւ-
նը» (Frauenrecht und Frauendienst)—Սուպեր-
ինտենդանտ Նիման-Կիրիցի. «Կանանց կա-
րիքն ու օգնութիւնը» (Frauennoth und Fra-
uenhilfe)—տիկին Հ. Բիբեր-Բոնմի:

Սկզբում Հայպիգի քաղաքագլուխ զօկաթ
Դիտտրիխ բաց արաւ ժողովը հեռեւեալ խօս-
քերով. «Բարոյականութիւնը կազմում է մարդ-
կութեան ընդհանուր առաջադիմութեան հիմ-
նական մասը: Բարոյականութեան գիտակցու-
թեամբ է մտքը անհատը ինքն իրան բարձր
զգում կենդանական դրութիւնից եւ ծառա-
յում մարդկային ճշմարիտ կոչման: Ապա ամ-
բիւս բարձրացաւ պրոֆէսոր Զոմը. նա խօսեց
նախ բարոյական հայեցակէտի նկատմամբ գեր-

ցանկ հանրակացարաններ եւ էման քանակաւոր-
ներ. եւ իսկապէս այս միջոցը հնչող կարելի է
գործադրել որոշ դասակարգերի մէջ, որոնք
միացած են ընդհանուր շահերով կամ ծա-
ռայութիւնով եւ այլն, եւ ահա գործակատար-
ները, իբրեւ որոշ դասակարգ՝ ունենալով
միացնող օղակ վերոյիշեալ ընկերութիւնը
կարող են օգտուել այդ միջոցից: Ինչպէս
տեսնում էք, գործեր չափ կան կատարե-
լու եւ նորահաստատ ընկերութեան նոր
ընտրելի վարչութեան վրա մեծ պարտականու-
թիւն կայ ընկերութեան գործունէութիւնը
ամուր հիմքերի վրա դնելու եւ իրագործելու
գործակատարների կենսական կարիքները:

Պէտք է աշխատել հասարակութեան հետա-
քերտութիւնը վառ պահել դէպի այդ վերին
աստիճանի օգտակար ընկերութիւնը: Ցանկա-
նում ենք կատարելաւ աշողութիւն:

Անյուշ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«Տրիւնի», դրամ 5 գործ. հեղ. Գէլի:

Երկուշաբթի, նոյեմբերի 12-ին, հայ դերա-
սանական խումբը արտիստիքական ընկերու-
թեան թատրոնում արտադրեց ընկերութեան
ներկայացրեց «Տրիւնի»: Այս դրաման փոխադր-
ված է անգլիական մի վէպից, իսկ ուղեւորէն
փոխադրութիւնից տեղի է ունեցել հայերէն
թարգմանութիւնը:

«Տրիւնի» մասնաւորապէս ուսուցիչ բեմերի
վրա յաճախ է դրվում եւ իր մի քանի առանձ-
նայատկութիւնների պատճառով բաւական մեծ
հասարակութիւն է գրաւում: Դրաման լի է
էֆէկտներով եւ մի քանի հետաքրքրաշարժ
ժամկետներով, այնպէս որ մի չնորային դերա-
սանի եւ դերասանուհու տաղանդի փայլը ցոյց
տալու համար բաւական նպաստաւոր, գործ-
նական միջոց է ներկայացնում: Բայց մեզ
թուում է, որ դրամայի արժանաւորութիւնը
որոշում էլ համարեալ օպտիմիզմ, օպտիմիս-
տիկ վերջնական, որովհետեւ գեղարուեստական եւ
նայելով զուտ դրամատիքական տեսակէտից
դա առանձին դրամի մի երեւոյթ չունի:

Դրամայի գլխաւոր հերոսուհին է Տրիւնի
Օ'Ֆէրար, իսկ հերոսը՝ Սվենգալի: Վերջինս
գերմանական հրէայ է, մի աշխարհաքաղաքա-
ցի՝ օժտված իր ցեղի թէ՛ դրական եւ թէ՛ բա-
ցասական որոշ առանձնայատկութիւններով:
Նա ուժեղ կամքի տէր է, եւսանդոտ, կրքոտ,
տոկուն, նպատակին հասնելու համար միջոց-
ների մէջ խորութիւն չը դնող, յամառ եւ
անխնդ, բայց միաժամանակ՝ ծածկամիտ, խո-
նարակ:

Մասնաւոր ընտելութեան խառնուածքի մա-
սին, իբրեւ ցեղական առանձնայատկութիւն
հեւ, ներկայ կենսութեւն այդ յատկութեան զարկ
տուող ֆակտորների մասին. ապա տունը մի
համեմատական վիճակ գերմանական ժողո-
վրդի եւ իր հարեւան եւրոպական միւս ժողո-
վրդների բարոյականութեան աստիճաններին:
Նա նկատեց, որ անհատականութիւնը, մասամբ
նաեւ եւստիքութիւնն ու շարժարկութիւնը,
եւ առհասարակ անկարելի զգացմունքը գեր-
ման ցեղի մի յատկութիւն է: Եւ այդ յատկու-
թիւնը փոխանակ նուազելու, ընդհակառակը
ունի կենսութեւն զարգացնելու նպատակաւ հան-
դամանքներ—տեսնեալ կենսութեւն եւստիքի
հոգեւորութիւնն եւ քաղաքական ինքնուրոյն
ձգտումներ, որոնք սակաւ չեն խանգարում
գերմանացու բարոյական աշխարհայեցողու-
թեան ընդլայնման գործնական աշխարհում
«Գործնական» եւստիքն—չնչեց նա առանձ-
նապէս,—որովհետեւ գերմանական ազգը տուել
է տեսական հոգի վրա ընդհանուր հոգի վա-
յելող բարոյագէտներ, սակայն միւս կողմից
ինչ օգուտ, երբ մենք տակաւին հետեւ ենք
ընդհանուր մարդկային ուրախութեամբ եւ
վշտերով համբոված Դադաուսներ եւ Տօյ-
տօյներ արտադրելու: Գերմանացի կիրթ եւ
եւ անկիրթ անհատ խուլ է եւ անընդունակ
բուն գերմանական օպտիմիստների դուրս լուրջ
բողբոյ, արտունայի եւ աղէտի արձագանքից
գթաշարժվելու, զգածվելու եւ ձեռք մեկնե-
լու յատկութեան, եթէ միայն, ի հարկէ, այդ
խնդրում նա չունենայ անձնական կամ ազգա-
յին շահ... Այս նկատումներով յարգելի պրո-
ֆէսորը չօչափեց գերմանացու հոգու սուրբե-
րով կողմերը:

Ապա նա անցաւ ընտանեկան եւ հա-
սարակական բարքերին, որի տեսակէտից
նա լուստես եւ միեւնոյնական կարծիք
յայտնեց, համեմատական չափ դնելով գերմա-
նական ազգի եւ անգլիական, մասնաւոր Ֆրե-
րանսական ազգերի մէջ: Գերմանական ազ-
գի—ասաց նա ի միջի այլոց—վիթխարի ա-

րամանկ եւ հնարագէտ: Այս բոլորի հետ միա-
սին նկատելի է, որ Սվենգալին որոշ չափով
անվեր է նաեւ նիշէական հոգեւոր. նա անհա-
տակալութեան պաշտամունքի երկրպագուն
է, բայց մի անհատականութիւն, որի մէջ
անսայթաք հետեւողականութեամբ աւելի չու-
կապիտ է գործում է գերակշռում, քան թէ՛ որ եւ
է առողջ տարր:

Սվենգալին պարագլուխով երաժիշտ է,
խոշոր տաղանդի տէր մի դաշնակահար: Նոր
Բարբիսում, Պարիզում, նա հանդիպում է
Տրիւնիին, գեղեցիկ մի անգուհու, որ համա-
խարհային քաղաքի յայտնի անկենդանի մե-
կուհի է: Լատինական թաղում, քաղ էր տալիս
իր կենսութեւն: Իր օրապահիկը հայթայթելու հա-
մար՝ Տրիւնին բայի տնային օժիտական զբաղ-
մունքներից՝ զանազան նկարիչների արուես-
տանոցում մօղէլի դեր էր կատարում: Բայց
անգլիացի գեղեցկուհու կողմից թագնւած
է մի թանգազին քանձ, —այս իր գեղեցիկ ձայնն
է, որ արդէն չափերի ուշադրութիւնն էր դը-
րուել: Սակայն դժբաղդութիւնն այն էր, որ
Տրիւնին պակասում էր երաժշտական կարե-
ւորագոյն յատկութիւններից մէկը՝ լսողու-
թիւն: Սվենգալին նման մի հմուտ եւ նրա-
ձայնի երաժիշտ իսկոյն յափշտակվում է Տրի-
ւինի ձայնի գեղեցիկութեամբ եւ վճռում է այդ
հասարակ անգուհու անյայտ գանձը մի թան-
գազին գործերի վերածել: Բայց կրքոտ հրէային
յափշտակում է ոչ միայն ձայնը, այլ եւ հինգ
ինքը՝ Տրիւնին:

Իտալիյի հնարագէտ գաւալը խուլ է Տրի-
ւինի իր սիրահար-նշանածից՝ Բիլլի Բէգոտից,
որ անգլիական բարձր եւ հարուստ ծաղումից էր
եւ Պարիզում նկարչութեամբ էր պարագլուխ:
Սվենգալին մտնից առաջ հիպոտիզմով բը-
ժելու է Տրիւնին. արեւմտեան լսողութեան
ոյժ է ներշնչում նրան եւ այդպիսով դարձ-
նում մի նշանաւոր երգչուհի: Տրիւնին կամ-
քով ամբողջովին դառնում է Սվենգալի
ստրուկը:

Դրամայի հերոսներ եւ երգչուհի ամուսնանում
են միմեանց հետ ու Եւրոպայի զանազան կող-
մերում երաժշտական պայտյուններ են գործում:
Բայց տարիների ընթացքում Սվենգալի կամ-
քի գործութիւնը, եւստիքը պակասում է, հիպ-
ոտիքական ոյժը նուազում: Միւս կողմից
Տրիւնին ներադրել քաղաքական է: Այնպէս
որ վերջինս մի հանդիսաւոր կօնցիկտի ժամա-
նակ յանկարծ սթափվում է եւ այլ եւս ան-
ընդունակ է երգել: Արեւմտական հանձարն
օպտիմիզմ է, Տրիւնին հմայիլ բէլ-կանտոն

նում կարճ տարիների ընթացքում, գերմա-
նացու պարթեւ հասակը, առողջ ու լի կազ-
մուածքը եւ իբրեւ այս արդիւնքների աղբիւր
ընտանեկան կեանքի անխափտ սրբութիւնը,
հասարակական բարքերի ոչ այն աստիճան
այլադաս յայտնուածը, ինչպէս Տրանսիա-
ուսիւն է, բաւական զօրեղ պայտյուններ են
հաստատելու, որ գերմանական ազգը իր ներ-
քին լիառատ կենսունակութեան չնորհիւ ոյժ
ունի եւ կարող է դեռ աւելի բարգա-
ւաճել, առաջ անցնել իր հարեւան շատ
ազգերից: (Որոտակից ժամանակութիւն):

Պրօֆէսոր Ջօմից յետոյ ամբին բարձրացաւ
Բերլինի պատմական նշանաւոր քաղաքիչ
Շեօկէթը: Նա իր թեմայի մէջ բաւական ման-
րամասն առաջ էր բերել մի ստատիստիկա
հասարակական սկանդալների, ժողովրդի ան-
գործութիւնը վրդովող շարժանքների, տեղի,
անբարոյական երեւոյթիւնների, վայնաստեղծների
եւ ոճագործների, որի առիթով նա յայտնեց
իր ցուակցական դարձանքը, երբ տեսաւ, որ
ամբողջ ութ տարվայ (1887—95) ընթացքում
մաքուր բարոյականութիւնը պղտորող այդ
սկանդալների պրօցէսը կրկնակի աճել է, հա-
նելով 7400-ից 14700-ի, եւ այն էլ ոչ ամբողջ
Գերմանիայում, այլ միայն Պրուսիայում: «Այս
վիթխարի քանակի մէջ—չնչեց նա բարձրա-
ձայն—եւստիքն է նկատի չունենալ օգիտա-
վողները, որոնք իրենց իրաւունքները, իր
զգեցնող ազդեցութիւնը, որոնք կուտւում են ան-
չուշա յանուն իրաւունքի, տեսնեալ բարոյ
վիճակ ձեռք բերելու պահանջով զինված: Նը-
րանց գործողութիւնները, կրկնում եւս, սկզբ-
բունքով բարոյական են եւ ոչ դատապարտելի:
Սակայն նրանք մի բանում չարաչափ օխալ-
վում են, երբ քաղ իր արձանագծում մեր դէմ եւ
խոչընդոտ հանդիսանում մեր կառուցանելիք
չէնքի աւարտման: Նրանք միաժամանակ կար-
ծում են, թէ մենք, ժողովրդի մէջ բարոյական
զաղափարներ տարածելու կոչվածներս, սկզբ-
բունքով հակադէմ ենք իրանց դատին: Գաւ-
լիցի, մենք դաւաճում եւ լինելիք այդ դէպ-

չքանում է: Այս դժբաղդութիւնը թէ՛ Սվեն-
գալի եւ թէ՛ Տրիւնիի համար դառնում է մի
հակառակորդական հարուած, որին երկուսն էլ
զոհ են գնում:

Ահա այս էր դրամայի գլխաւոր բովանդա-
կութիւնը, որի մանրամասնութիւնների վրա
աւելորդ ենք համարում կանգ առնել:

Ինչ վերաբերում է խաղին, պէտք է նկա-
տել, որ շատ աղող անցաւ Բենէֆիցիանալ պ.
Արեւմտեան կատարում էր Սվենգալի դերը:
Հրէայ երաժիշտի, մոլեգին, կրքոտ սիրողի,
ձարպիկ հիպոտիզէօրի եւ անսական հասա-
կում անողող կերպով փառքի դափնիներից
զրկված աշխարհաքաղաքացու տիպը նա հա-
ւասարապէս շատ հմուտ նրբազգածութեամբ
արտայայտեց: Անկասկած՝ պարոնը իր դերի
լիակատար ուսումնասիրութեան համար ոչ մի
ջանք չէր խնայել. այդ պատճառով էլ նրա
խաղը համարեալ իր բոլոր եղեւշներով խելա-
ցի էր եւ մտածված: Բայց պ. Արեւմտեանի զը-
խաւոր առաւելութիւնն այն է, որ նա ունի
տեղեւորագործելու շնորհ, առանց այս առանձ-
նայատկութեան, առանց այս անհատական
տարրի անմտածելի է եւ ոչ մի դերասանա-
կան տաղանդ: Պ. Արեւմտեանի առաւելութիւնն
ներկայ մէկն էլ այն է, որ նա զուրկ չէ բա-
ւական հարուստ միակցից: Ինչ վերաբերում
է պարոնի առողջանութեանը՝ պէտք է նկատել,
որ առհասարակ լաւ էր, բայց զայրոյթի, կը-
քի օպէններին տեղ տեղ անյատակ արտայայ-
տութիւն էր ցուցնում: Պարոնը իր խաղով
առանձնապէս փայլում էր երկրորդ եւ չորրորդ
գործողութիւնների մէջ: Հասարակութիւնը
զերմ ծափահարութեամբ վարձատրեց պ. Արե-
ւմտեանին, որ ստացաւ նաեւ մի քանի ընծաներ:
Շատ ցանկալի կը լինէր, ի հարկէ, որ պ.
Արեւմտեանի նման մի տաղանդ իր եւսանդն ա-
ւելի գնահատելի՝ ընթացական դրամաների նը-
ւերէր:

Տրիւնի Մայսուրեանցի Տրիւնին մեզ վրա
շատ լաւ տպաւորութիւն թողեց: Տրիւնի խա-
ղը իր կենդանութեան հետ միասին՝ պարզ
էր, բնական եւ անկախակից: չորրորդ գործո-
ղութեան վերջին տեսարանները մանաւանդ
նա մեծ աղողութեամբ տարաւ: Լեզուի եւ
արտասանութեան անհարթութիւնները համա-
նա հետեւեալ անկատելի են դառնում: Տրի-
ւին ընկնելու, ամբողջութեամբ մի ուրախալի
անակրկալ էր: Այնպէս որ համարձակ կերպով
կարելի է առել, որ տիկինը կարճ ժամանակվայ
ընթացքում գուցէ հայ դերասանական խմբի
ամենապիտանի անդամներից մէկը դառնայ:

Ջոմի մեծ վարդապետի զուտ սօցիալական,
կոսմօպօլիտ գաղափարներին թող լաւ հաս-
կանայ սօցիալ-դէմօկրատիան, որ ճշմարիտ
բարոյականութիւնը պաշտպան եւ զէնք է ե-
ղել ընկնվածին, հարազատարկածին զայնուն
իրաւունքի եւ հասարակութեան իրէպով, եւ
դարձաւ թող համազօր լինի, որ գոնէ մենք,
եւստիքական քաղաքացիներս, այդ տեսակ
բարոյականութեան հնք նախանձախնդիր, թող
նա մեզ չը խառնէ կաթիլի եւ եղուիտ տի-
րաւոր կղերականների հետ: Սօցիալ-դէմօ-
կրատիայի պահանջները կիրականանան միայն
այն ժամանակ, երբ ճշմարիտ բարոյական ըզ-
գացումները կը թագաւորեն գործնական աշ-
խարհում եւ զէնքի ու բռնութեան իրաւուն-
քին կը փոխարինէ բարոյականութեան եւ ազ-
նիւ աշխատանքի իրաւունքը: Ուրեմն այլ եւս
ինչ է ուզում սօցիալ-դէմօկրատներս, երբ մեր
չանքերը մի եւ նոյնն են, թող նա միմայ մեզ
հետ եւ եւստիքական ընդհանուր ոյժը: (Բուն
ծափահարութիւն, մի խումբ սօցիալ-դէմօ-
կրատների «Էնցեց» կոչումով):

Բոլորովին վերջում այդ անգին քանակու-
թիւն ունեցող հասարակութիւնը, քաղաքաքաղ-
լի առաջադեմութեամբ, երգեցին բոլոր միա-
սին, բաժանեցին զարկելով, «Deutschland,
Deutschland über alles» գովաբանական երգը:
Գոնե՛ք Էնցիցիայի մասին ընդհանուր դիտո-
ւթիւններ անելուց յետոյ, կուզենայի իմ
ստացած ընդհանուր տպաւորութեան առիթով
մի քանի խօսք առել:

Մարդ ուղղակի հիանում է, երբ տեսնում է
իր առջեւ կանգնած քաղաքիչ, որ ունի հոգե-
ւոր կոչում, եւ խօսում է յանուն տեսարա-
նական ճշմարտութեան, այնքան լուսավոր, առա-
նադիպ, ազատ ու անխաղաղ զինակի
տակ: Մարդ, ասում եմ, առաւել եւս այնչափ
մարդ, որ դժբաղդութիւն է ունեցել կաթիլի
կամ նոյն իսկ հայ կղերի, մասնաւորապէս
առաւելաբանի քաղաքները լսելու, սքանչանում
է, երբ տեսնում է ամբողջի վրա բողբոյական
պատարհին, որ կրակով, վառվում է միայն

Միւս դերակատարներից լաւ էր պ. Պետրո-
սեանի Ուին. այն ինչ պ. Արեւմտեանի Բէգո-
միայն բաւարար տպաւորութիւն թողեց. պ.
Աւետեանի Ալեկսան վատ չէր: Միւսներից ամ-
բողջութիւն խանդաղող չը կար:
Թատրոնը բոլորովին լիւն էր:

Վ. Նալբանդեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Նոյեմբերի 10-ին

Թէեւ կիսատ-պատ, բայց եւ այնպէս
մէկ մէկ հայերէն ներկայացումներ ունենում
ենք: Միւսիսարական այն փառքն է, որ ներ-
կայացումներին յաճախող հասարակութեան մե-
ծագոյն մասը կրիզիսի հետ առնչութիւն
չունեցողներ են եւ մասնաւոր թէ՛ մտքով
անգամ չեն անցնում թատրոնը կապել նրա
հետ:

Պ. Արաքսեան, հայ բեմից դուրս մնացած
այս կարեւոր ոյժը, իր ամուսնու եւ տեղական
օրրոգների հետ երկու ներկայացում տուեց
արդէն. մէկը անցեալ հոկտեմբերի 28-ին, միւսը՝
ամսիս 5-ին, առաջինը մի դրամա «Ոսկու
ստրուկներ» վերնագրով, երկրորդը ծագաւոր
«Պանդուխտ» բովանդակով կողմից անբա-
ւարար, իսկ մուտքի կողմից շահաւէտ. երկու
ներկայացումից զուտ արդիւնք մնաց մօտ վեց
հարիւր ռուբլի: Վերջին ներկայացման «Պա-
նդուխտ» դերը կատարեց ինքը, Արաքսեան, մի
երեւոյթ, որ ներկայումս, կանոնաւոր խումբ
ունենալով հանդերձ, յիշեցնում է հայ բեմի
սկզբնաւորութեան տարիները, երբ կանանց
գերերը շատ յաճախ կատարում էին տղամար-
դիկ ակամայ:

Այժմ այստեղ են Թիֆլիսի խմբից դուրս
մնացած երկու դերասանուհիներ՝ օր. Վարդուհի
եւ տ. Մէլիքեան. օպտիմիզմ է եւ պ. Ա. Յա-
րութիւնեան, որոնք պ. Արաքսեանի հետ,
միացած ոյժերով, ամսիս 18-ին պատրաստվում
են ապ Սոււնդուկեանի «Պանդուխտ»:

Նախընթաց երկու ներկայացումների աղո-
ղութիւնը գրաւական է, որ հասարակութիւնը
դեռ չէ առել հայ բեմից եւ կը յաճախէ երրորդ,
գուցէ եւ չորրորդ, ներկայացումներին նոյն-
պիսի պատրաստականութեամբ եւ սիրով: Ներ-
կայացումները տեղի կունենան տեղական օր-
րոգների մասնակցութեամբ, որոնց մէջ կան
շատ չնորհալի խաղաղութներ: Պ. Արաքսեան
հարկւրված է Երեւանի ուսուցիչ խմբի ղեկա-
վարից ամսական 160 ռուբլիով. նա տալիք
է թողնել հայոց բեմը. ծանր է խոտովանել

եւ միմային ժողովրդի ցուներով, կարիքներով,
իրեւ խիստ մօտ ծանօթ նրա ամբողջ կենս-
քին, եւ ժամանցոյց է անում նրան իսկական
առաջնորդող ճանապարհը: Մարդ առանց դը-
ժուարութեան համոզվում է, որ բողբոյական
կրօնաւորները չեն պատկանում կաթիլի, օր-
թողքս եւ լուսաւորչական այն անաղիկ կղե-
րական բանակին, որոնց ամբողջ գործունէու-
թիւնն ու պարտականութիւնը մի շարք
ճանապարհ եւ աւելորդ ցերեմօնաներ կա-
տարելու մէջ է կայանում: Այն կոպ-
լէկա խնդիրները, Աստուծու արքայութիւն
ժառանգելու վերաբերմամբ, այն մտքով ու
կենտոտ խորհրդածութիւնները, որ ժողովրդա-
տեսց հայ աստուածաբանների ամենօրեայ
ճաղղն ու փնչակն է կազմում, կարծէք բնա-
զոյութիւնն չունեն մեծ Լիւթերի արժանաւոր
յաջորդների համար: Ի հարկէ ֆանատիկոսներ
եւս կան, ընդհանուր ամամբ դատելով, ու-
րոնց տեսական կեանքի համար անկապած
հող չը կայ: Սակայն այս ասելով, միայն կու-
ղենայի չնշել մի հանգամանք. արդեօք հրա-
պարակախօս ծաղրական ծիրանի հազած պո-
ռաւարտու հայ աստուածաբանները, գոնէ եթէ
ամեն բանում անշնորհ գտնվեցին, նոյն իսկ
ընդունակ չեղան բողբոյական պատարհից իւ-
րացնելու այս գեղեցիկ օժիտութիւնը: Պատճա-
ժամանակը իբրեւ փաստ հրապարտութեամբ ար-
ձանագրում են, թէ Գերմանիայում աստուա-
ծաբանութիւնը զարգացած է: Այն, Գերմա-
նիայում գիտութեան օր ձեւը ասես, որ
հակապական քայլեր չէ անում, բայց դա ինչ
արդարանալու միջոց է, երբ նոյն Գերմանիա-
յում ձեռք էք բերում նոյն իսկ ձեռք «հիւանդ»
ձեւով «առականք», իսկ հայրենիքում հազ-
նում միջնադարեան սքեմա: Միթէ մեղաւոր
են հայն ու հայ մամուլը, երբ ամենայն իրա-
ւամբ ծիծաղում են ձեռք «մեռած» աստուածա-
բանութեան վրա:

Բ. Ի.

այդ Միւս կողմից էլ Թիֆլիսի խմբի ներկայ-
կան անմիջիցս վերադառնալու մէջ ցաւ պատճառ-
առով միջոց, իսկապէս, այնքան ընկել ենք
մենք, որ չենք կարող ապահովել մեր աղքատ-
աբի բնութիւնը աշխատանքներին, գէթ այն
յափով, որ կարողանան նրանք փոքր ի յատե-
մարդավայել կերպով ապրել եւ զբաղուի հարա-
ւորութիւն ունենալ մտածելու միայն զժողովուրդ
այս բնութիւնը ապահովելու մասին։ Այս, ի
հաստատակերպութեամբ, մենք ընկել ենք, ինչպէս
լը խոստովանել։

Սլաք

ՆԱՄԱԿ ԿԱՐՄԻՏ

Նոյեմբերի 13-ին
Երզրուսից ստացած նամակները, որոնք
գրված են նոյեմբերի 6-ի թուով, յայտնում են,
որ մինչեւ այդ օրը երկրաշարժը դեռ չարու-
նակվում է երբեմն թոյլ, երբեմն աւելի ուժեղ
յնջողմներով։ Ժողովրդի մի մասը, խաբկելով
երկրաշարժի ժամանակաւոր դադարից, փոր-
ձել է տեղափոխվել բնակարանները, բայց
ցնցումները կրկնվել են նորից ստիպել է նրանց
դուրս փախչել բնակարաններից եւ ապրել
բացօդային։

Ամսիս 18-ին նշանակված է զաղաքի դե-
պուտատների ընտրութիւնը մի տարի ժամա-
նակամիջոցի համար։ Յոյս ունենք, որ մեր
քաղաքացիները մի կողմ կը թողնեն իրանց
անտարբերութիւնը եւ կընտրեն աւելի ձեռն-
հաս եւ մասնաւոր գործէն ու պետական լի-
զուէն եւ օրէնքները գիտող անձանց, որոնց
պաշտօնավորութիւնն աւելի օգտակար եւ
ցանկալի կը լինի քաղաքի շահերի տեսակէ-
տից, քան անգործ եւ վերայիցայ յատկու-
թիւնները չունեցողները, որքան էլ նը-
րանք անկեղծ գործին նուիրված եւ փորձ-
ված լինեն։ Այս ընտրութիւնն այժմ աւե-
լի քան երբեք կարեւոր է, որովհետեւ աշ-
քի առաջ կան ծանրակիւղ հարցեր, ինչպէս,
օրինակ, քաղաքի ինքնավարութեան հարցը,
լուր մատակարարելը, պրոգրիսիւսի բացու-
մը, քաղաքի լուսավորելը եւ այլ բազմաթիւ
խնդիրներ, որոնք անհրաժեշտ են եւ որոնց
համար անհրաժեշտ է ժողովրդի ջերմ աջակ-
ցութիւնը։

Հ. Նոյեմբեր

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ժընէվ, Նոյեմբերի 16-ին
«Մշակ» 235 համարում մի ինչ որ Լեւոն
Սափարեան յայտարարում է, ի դիմաց Պետե-
րուզի հայ ուսանողութեան, թէ ես այս ա-
մառ Շուշուի երեկոյթ եմ սարքել եւ Պետե-
րուզի ուսանողութիւնը դրանից ոչինչ չե-
ստացել։ Թիւր մտքի տակ եզրակացութիւն
է այս—ենթադրել թէ մեր որ երեկոյթ լինի
կամ բարեգործական ձեռնարկ, Պետերուզի
ուսանողութիւնը մաս պիտի ունենայ։ Երեւոյ
դպրատն պիտի լինի այս ուսանողութիւնը, ե-
թէ չուտով չուղէ իր սրտը։

Երեկոյթը, որի մասին «Մշակ» էլ գիտէ,
որովհետեւ հային այնտեղ տղվից, միայն ես
չեմ սարքել, կարիքն եւ ուրիշները։ Նրա սար-
քողները ի նկատի ունենցած են միայն երկու
ուսանող։ Իսկ ես՝ երեկոյթի թոյլտուութիւնը
կընդունելով պ. նախագահացից, յիշել եմ խնդ-
րագրին մէջ նոյն այդ երկու պարոններին իսկ
Պետերուզի ուսանողութեան մասին մտա-
ծել անգամ չէի ենթադրել։

Թոյլ տուէ՛ք աւելացնեմ, որ ես այնքան
միամիտ չեմ, որ այդ ուսանողութեան օգտին
որ եւ է ձեռնարկ սկսեմ...

Դ. Տեր-Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Մշակ» հետեւեալ համարը, Մայր-Կայս-
րուհի Մարիա Ֆեօդորովնայի ծննդեան տօնի
պատճառով, լոյս կը տեսնէ ուրաւթ, Նոյեմբե-
րի 16-ին։

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ ուրաւթ
օրը տեղի կունենայ ցուցահանդէսի գլխավոր
գնահատող յանձնաժողովի նիստը՝ որոշելու այն
պարզ եւ ներքին, որոնք պէտք է արվեն ցու-
ցահանդէս ներկայացրած առարկաների համար։

Այնքանապատճառով երկաթուղային գծի
վրա գնացքների անկանոն երթևեկութիւնն
որդէն սկսված է, բայց գնացքները դեռ եւս
չեն հասնում Սերեան, այլ կանգ են առնում
էջմիւսի մօտ, չորս վերջում նրանից հետո
Առաջին գնացքը Ալեքսանդրապոլից մինչեւ
Սերեան կը հասնի զեկտեմբերի 6-ին։ Գծի
պաշտօնական բացումը տեղի կունենայ առա-

ջիկայ 1902 թվականի յունվար կամ փետրվար
ամիսներին։

Ժողովրդական լուսավորութեան միջնոր-
դութեան մէջ ընկնում է մի հարց, որով մը-
տադրութիւն կայ անարգել թոյլտուութիւն
տալ աշակերտական պարբերական թերթեր
հրատարակելու միջնախաղ ուսումնարաննե-
րում։ Թերթերի հրատարակութեանը, իբրեւ
աշխատանքների, պէտք է մասնակցեն միայն
երկու բարձր դասարանների աշակերտները,
իսկ խմբագիրների պաշտօն կը կատարեն ու-
սուցիչները։

«Полт. Губ. Вѣд.» լրագիրը հաղորդում է,
թէ Պոլտավայում եւ նրա շուրջը գտնվող տե-
ղերում վարչապալայից եկած խոշոր առեւտրա-
կան միջնորդների մի ընկերութիւն վերջին
ժամանակ զննում է մեծ քանակութեամբ ձիեր
անգլիական հարաւ-աֆրիկական զօրքի համար։
Մինչեւ այժմ գնված են արդէն մօտ 900
ձիեր։ Իւրաքանչիւր ձիու համար միջնորդ-
ները վճարում են 80-ից մինչեւ 120 ռուբլի,
նայելով ձիերի յատկութեան եւ ցեղին։

Ինչպէս յայտնի է, կովկասեան յօբելանական
ցուցահանդէսը բաց կը մնայ միայն մինչեւ նո-
յեմբերի 21-ը։ Նոյեմբերի 22-ից բոլոր էկս-
պոնենտներին, որոնց թիւում եւ մասնաւոր
պալիթիւններ ունեցողներին, թոյլ կը արվի
տանել իրանց ցուցադրած առարկաները մի
ամսով ընթացքում։ Այն առարկաները, որոնք
այդ ժամանակամիջոցում չեն տարվի ցուցա-
հանդէսից, կը համարվեն կովկասեան Գիւղա-
անտեսական ընկերութեան սեփականութիւն։

Ներքին գործերի միջնորդութեան անտե-
սական ղեկավարամէնտը պետութեան բոլոր
քաղաքային ու պարամունքից տեղեկութիւններ
է պահանջել այն բոլոր գնացքների մասին,
որ քաղաքային դուռները տուել են կառա-
վարի սենյակին սկսած 1892 թվականից, երբ
սկսել է գործել քաղաքային նոր կանոնա-
դրութիւնը։

«Вѣстник» լրագրում կարդում ենք. «Թիֆ-
լիսում ապրող Գիւրտ աւագ-քանակայ Այդ քա-
նանին թոյլ է տուած հրատարակել այդ քա-
ղաքում, նախնական ցենզուայի թոյլտու-
թեամբ եւ նրա խմբագրութեամբ մի ամսա-
գիր հայերէն լեզուով «Լուսնայ» անունով, որի
ծրագրի մէջ կը մտնեն, ի միջի այլոց, յո-
ղաւորներ թէ ընդհանուր վիպական եւ թէ կով-
կասագիտութեան վերաբերած։ Ամսագիրը
կը հրատարակվի տարին 6 անգամ եւ կարծե-
նայ տարեկան 6 ռուբլի։

Ֆինանսների միջնորդութեան մէջ, ինչպէս
հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները,
չուտով կը նշանակվի մի մասնագետով, որ
երկրագործութեան եւ պետական կալուածք-
ների միջնորդութեան ներկայացուցիչների
մասնակցութեամբ կը մշակէ միջոցներ ուսե-
նելուն եւ այլ գիւղատնտեսական արդիւնքնե-
րի կեղծման դէմ։

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են,
որ կառավարչական շրջաններում մտադրու-
թիւն կայ կաղնիկ պատմական եւ այժմեան
հազուսանների ու նրանց պատկանելիքների
միջադպրային ցուցահանդէս։ Այդ նպատակով
կազմված է մի մասնագետով, որ Նոյեմբերի
6-ին սկսեց իր պարապմունքները ֆինանս-
ների միջնորդի օգնական Վ. Կովալովսկու
պատուաւոր նախագահութեամբ։

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Տխրահշակ
Վելիչկի «Нефтяной Фонтан» պիեսը, որի
մասին արդէն գրված է «Մշակ»-ում, էլի շա-
րունակում է ներկայացնել Փոքր թատրո-
նում։ Ընդէ, ժողովուրդը յաճախում է, բայց
յաճախում է միայն հետաքրքրութեան համար,
տեսնելու թէ Վելիչկոն ինչպէս է ուղեցել
պատմել կովկասցիներին Սակայն ուրախակի
այն է, որ այստեղի ժամուկը, բացի ի հարկէ
«Московскія Вѣдомости» լրագրից, միաձայն
դատաւիտեց Վելիչկոյ անարժան աշխատու-
թիւնը, թէ ինչպէս անհամ պիես եւ թէ նրա
կեղտոտ նպատակը։ Ի դէպ, «Нефтяной Фон-
тан» պիեսի ներկայացման ժամանակ մի
խումբ ուսանողներ չուարդին Մեր կարծի-
քով, դրանք այդ քայլով նշանակութիւն են
տալիս պիեսին եւ Վելիչկոյի համար ընկալմ
ստեղծում։ Մամուլը արժանաւոր կերպով
պատմել է Վելիչկոյին խաչ դնելով նրա պիեսի
վրա։ Այդ բաւական է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ մեզ գրում են. «Այս տարի Դը-
լարի շրջանից վիճակահանութեան հրաւերված
էին 135 նորակոչ զինւորներ։ Դրանցից 36
հոգի ընդունվեցին իբրեւ զինւորներ, որոնց
թիւում կային եւ երկու հայեր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Daily Express» ապագրել է մի հետաքր-
թէրանից, որի մէջ հաղորդված է, թէ պար-
սից Շահը մտադրութիւն ունի նորից այցելել
Եւրոպա առաջիկայ տարվայ դարնանը, եթէ
մինչեւ այն ժամանակ չը պատահի մի արտա-
կարգ բան, որ արգելէ դառնայ նրա մտադրու-
թեան հրադրմանը։ Շահը կամենում է ճա-
նապարհ ընկնել Թէրանից ապրիլի վերջին
դէպի Կոնստանդնուլի, որտեղ կը սկսէ բժշկվել, եւ
ապա այնտեղից կուղեւորվի Անգլիա։ Սակայն
Շահի ճանապարհորդութիւնը գլխավորապէս
կախված է այն բանից, թէ կաջողվի արգելա-
նքան անհրաժեշտ դրամական միջոցներ ձաբել
այդ ճանապարհորդութեան համար։ Շատ հա-
ւանական է, որ այս նպատակով Պարսկա-
ստանը նոր փոխառութիւն անէ Ռուսաստանից։

«Francia's Zeitung» հաղորդում են «Francia's Zeitung»
լրագրին, թէ Կրեմլին հոլանդական չորս պե-
տութիւնների դեսպանների կոնֆերանցին,
անգլիական դեսպանի ցանկութեամբ, յետա-
ձգված է մի չաբաթով։ Կոնֆերանցին կունե-
նայ միայն խորհրդակցական բնուրութիւն եւ
ոչ մի վերջնական վճիռ չի կայացնի կրեմ-
կան հարցի վերաբերմամբ։

«Times» լրագիրը հետաքրքում են «Times» լրա-
գրին, թէ սուլթանը, Նոյեմբերի 2-ին տեղի
ունեցած ռալմիլիէի հանդէսի ժամանակ, պա-
ձգված է մի չաբաթով։ Կոնֆերանցին կունե-
նայ միայն խորհրդակցական դեսպանատան
խորհրդական Բապտիստ իր գոհութիւնը Ֆրան-
սիայի եւ Թիւրքիայի մէջ դիպլոմատական
յարաբերութիւնների վերակազմում պատճառով։

Թիւրքական կառավարութիւնը, որ Աւստ-
րիայի հետ վարած վերջին բանակցութիւնների
ժամանակ լսած էր առեւ ճնշել այլաբանական
առաջարկներին, դիմել է Ալբանիայի քաղաքա-
ցիական եւ զինուորական իշխանութիւններին
մի հրամանով, որի մէջ պատահում է բոլոր
խիստ միջոցներ գործ ընել այլաբանի խոստա-
րարների դէմ։ Հրամայված է խել անհանգիստ
այլաբաններից զննելու եւ ամեն կերպ պաշա-
պանել թրիստոնեաներին։ Նահանգապետներին
ուղարկված շրջաբերական հրամաններում բա-
նացի կերպով ասված է, թէ Թիւրքական տի-
րապետութեան բաղդը եւրոպական նահանգ-
ներում կախված է բացառապէս բնակիչների
հանգամանքների եւ ապահովութիւնը վերա-
կանդնելու ջանքերից։ Համաձայն ստացված
կարգադրութիւնների, մի քանի այլաբանական
շրջաններում զինուորական ուժերի թիւը աւե-
լացրած է, որպէս զի տեղական իշխանութիւն
ները հնարաւորութիւն ունենան անյապաղ
ճնշելու այլաբանական ցեղերի ապստամբական
յարժուները։ Պետութեան առանձին միջոցներ
ձեռնարկված են երիտասարդ թիւրքերի դէմ,
որոնք Ալբանիայում շատ կողմնակիցներ ու-
նեն։

«Francia's Zeitung» հաղորդում է, թէ
Շերշտեյնում, գնեցնար Դէվլետի կիսաբանի
բացման առթիւ կազմված հանդէսի ժամանակ,
ճառախօսներից մէկը, Վիսարիոնի քարոզիչ
Վելիչկի, իր ճառի մէջ 1870—71 թվերի ֆրանսա-
պրտական պատերազմը անուանեց աւաղա-
կային արշաւանք, իսկ Նաոստուի միացումը
Պրուսիային—մի աղետալի իրողութիւն։

Իբրեւի գրութիւնը Աւստրիայում վերին
ատոմանի կրիտիկական քննադրութիւն է ըս-
տացել։ Ֆրանց-Յոլմեֆի կայսրը ստիպված էր
խոստովանել, որ պարամէնտի վիճակը յուսա-
հատական է։ Ընդունելով մօտ օրերում ընթա-
նագիր փոխ-նախագահ Դոկտոր Կայզերին,
կայսրը ասաց, «Ես սատակ վստացած եմ այն
բանից, որ պատգամաւորների ժողովը այդքան
դանդաղ է ըննում ամենակարեւոր գործերը,
ինչ մինչեւ անգամ թուում է, որ տարա-
ձայնութիւնները դանդաղ կուսակցութիւն-
ների մէջ աւելի եւս աստիպալ են վեր-
ջին ժամանակներում։ Ամենքս էլ ընդու-
նում են, որ պէտք է փոփոխութիւններ են-
թարկել պատգամաւորների ժողովի կանոնա-
դրութիւնը, բայց ոչ ոք ոչ մի քայլ չէ անում
այդ ուղղութեամբ։ Առանձնապէս ցաւալի է
այն, որ բիւջայի ճնշմանը արգելք են
դառնում զանազան առաջարկութիւններ, ու-
րոնց համար պահանջվում է անկեղծագոր-
ծութեամբ լինել։ Մինչդեռ բիւջայի ըննութիւ-
նը ամենակարեւոր հարց է։ Պատգամաւորները
պէտք է աշխատեն կարգ հաստատել իրանց
գործերի մէջ եւ եւ կարող են, որ փոքր ինչ
շուք գործ ընելով կաջողվի վերակազմել
պարլամենտական կենքի սովորական ըն-
թաղը։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

12 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Նոյեմբերի 12-ին արտա-

սահմանից վերադարձաւ Մեծ Իշխան Միխա-
յիկ Նիկոլայեւիչը։
Նոյեմբերի 12-ին արտասահմանից Պետե-
րուզ վերադարձաւ դանիական արտակարգ
դեսպան Լէվենկըն։

ՁԻՏԱ։ Ձիւնի պատճառով դադարած է Եր-
թուկութիւնը չինական ճիւղի Բորզիա, Օլո-
վեանայա եւ Օնէն կայարանների միջեւ։ Ձիւ-
նը մաքրելու համար ուղարկված են 300 բան-
ւորներ։ Ամեն օր Ձիւնայից թարմ հաց է բեր-
վում Բորզիա։

ՄՕՍԿՎԱ։ Լրագիրներում լուր տպվեց, որ
իբր թէ Ս. անունով մէկը Իւնկէրի բանկային
գրասենեակում իր կնոջ ձեռքով կապարով
վերցրած արկղից հանեց 180,000 ռ. կեղծ հա-
ւատարմագրով։ Այդ լուրը ճիշտ չէ, արկղի
կապարով վերցնելու ժամանակ յայտ-
նեց, որ թոյլ տրվի իրան անձամբ եւ իր մար-
դուն բանալ արկղը եւ ներկայացրէ նոսա-
րական պատճէն իր մարդու անունով տուած
լրակատար հաւատարմագրից։ Առանց այդ ձե-
ւականութեան արկղի Ս.-ի ամուսինը չէր կա-
րող, բանկային գրասենեակի կանոններով, մօ-
տենալ արկղին։

Կիւնի։ Նաւագնացութիւնը Դնէպրի եւ նրա
վտակների վրայով դադարեց։ Տեղի ունեցաւ
հրդեհ Տրոյցկի շուկայի մօտ, նախկին ցուցա-
հանդէսի տեղի վրա։ Կրակը բռնկվեց քաղա-
քին պատկանող փայտեայ երկու մեծ պալի-
թիւններում, որոնց մէջ դարձված էր Կոնի կա-
րասիները։ Հրդեհը սպառնում էր փայտեայ
գիւղի հարեւան չինութիւններին, կառուցվող
ժողովրդական տանը եւ խանութների փայտե
մասերին։ Հրդեհաշէջները ջանքով կրակի տա-
րածման առաջն աւելցրին։ Պալիթիւնները կա-
րասիքի պահեստով արկղիցին։ Վնասը 50,000
րուբլոց աւելի է։

ՐՕՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Այսօր առաւօտ Վա-
րկիվկայի երկաթուղու Ստեպանյա կայա-
րանում տեղի ունեցաւ Վաղիկովկայից գնա-
ցող պոստային գնացքի ընդարձակ ակ-
րանքատար գնացքի հետ։ Երկու գնացք-
ներից էլ բէլէրից դուրս ընկան տասներկու
վագոններ։ Երեք ճանապարհորդներ յայտնեցին,
թէ վնասվել են իրանք։ Զանապարհը խնս-
գարված է։

ՊԱՐԻՉ։ Մեծ Իշխան Վաղիկի Ալեքսանդ-
րովի այցելից նախագահ Լուբէրին, որը իսկոյն
եւ եթէ փոխ-այցելութիւն գործեց։

ԿՕԳԷՆՀԱԳԷՆ։ Նոյեմբերի 10-ին Այրի Կայս-
րուհի Մարիա Ֆեօդորովնա արտակարգ գնաց-
քով ճանապարհ ընկաւ դիպի Նիբորգ եւ Վանդ-
րուն։ Դանիական թագաւորը եւ պրինց Վալ-
դէմար ուղեկցում էին Կայսրուհուն մինչեւ
Րոսկիրէն։ Կայսրուհուն ներկայ էին թագաւա-
նաց պրինցը իր ամուսնով եւ արքայական
ընտանիքի մնացած անդամները, բոլոր մի-
նիստները եւ ուսուցիչ դեսպանութեան ան-
դամները։

ԿՕԳԷՆՀԱԳԷՆ։ Այրի Կայսրուհի Մարիա
Ֆեօդորովնա Նոյեմբերի 10-ին ճանապարհ ըն-
կաւ Գմոնդէն մէկ չաբաթով Կոմսերլանդեան
գաւթին այցելելու համար։

ՖԷՆԷՆԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 10-ին Ռուսաց
Այրի Կայսրուհին ժամանեց այստեղ եւ քա-
նոր ժամից յետոյ շարունակեց ճանապարհը։
ԲԵՐԼԻՆ։ Եսպոնական նախկին մինիստր
մարկիզ Խոս, Բերլինում շատ օրեր մնալուց
յետոյ, երէկ ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

ՊԱՐԻՉ։ Պատգամաւորների ժողովը Այսօր-
վայ երեկոյեան նիստում շարունակվում է փո-
խառութեան վերաբերեալ նախագծի ըննու-
թիւնը։ Պատգամաւոր Գէյս պահանջում է գե-
ներալ Վուսոնի զեկուցումը հաղորդել պե-
տաւորների ժողովին։ Վաղէկ Րուսոս առար-
կում է այդ առաջարկութեան դէմ, որը պատ-
գամաւորների ժողովը մերժեց 425 ձայնի մե-
ծամասնութեամբ 100-ի դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 10-ին ժամանեց
Եսպոնիայի նախկին մինիստր մարկիզ Խոս։
Կայսրանից եսպոնական հիւրը գնաց «Եւրո-
պա» հիւրանոցը։

ՀԱՄԲԱ։ Միջնորդ դատարանի վարչական
խորհրդի վճիռը բօքներին միջնորդութեան
գործի վերաբերմամբ հաղորդված է գեսպան
Լէյդային։ Վարչական խորհուրդը այն կարծիք
ունի, որ, համաձայն Հատգայի դաշնագրութեան
23-րորդ յօդուածի, նա պարտաւորված է սահ-
մանափակվել միայն վարչական բնաւորու-
թիւն ունեցող հարցերով եւ որ նա դուրս ե-
կած կը լինէր իր իրաւունքի սահմաններից,
եթէ գոհացումն տար բօքների պահանջին։

13 Նոյեմբերի

ՄՕՍԿՎԱ։ Նոյեմբերի 12-ին մասնաւոր օպե-
րայի գոյքի վրա դատաւարական արգելք

դրվեց եւ ներկայացուցանեցին այնպէս զառա-
րեցին:

ԳՄՈՒՆԵՏԷՆ. Կայսրուհի Մարիա Ֆեօդորով-
նա ժամանեց այսօր: Նրան դիմաւորեցին
Կոմսէրյանդեան զուգընդ եւ զքառուհի, նոյն-
պէս եւ Հանսովեթեան իշխանուհի Մարիա:

ԱՌՇԷՔԻ. Նոր նշանակված մինիստրները
երգումն առին թագաւորին: Գաղափարներ-
ըի ժողովի աշխատանքները զառաւելցրած են
40 օրով: Լիակատար հանգստութիւն է տե-
րում:

ԼՕՆԵՐՈՆ. Կեանքներ հեռագրում է Պրէտ-
րիայից: Մայիսի 3-ի անդիմադրեց Վիլի-
բէրգի մօտ տեղի ունեցած կռիւ մասին եւ-
րեւում է, որ գիշերով, նոյնմբերի 7-ին, Ֆի-
շերի պահակակէտից, որ գտնվում է Ռէյտֆօն-
տէյնի մօտ, ուղարկվեցին պահակախմբեր դէ-
պի Պալկապոյտ, որպէս զի վերջինն Զանդ-
գերֆտի վրա տիրող բուրբ: Պահակախմբերը
գտան բուրբ թշնամուց զբաւված: Ֆիշեր լու-
սաբացին առաջացաւ դէպի բուրբ եւ այդ ժա-
մանակ յարձակման ենթարկվեց թէ հիւսիսից
եւ թէ հարաւից: այնուամենայնիւ նրան ա-
ղովկեց հեռանալ հասնել մի լաւ ծածկված
դիրքի: Առաւօտեան 9 ժամին նրա ձիերը
յանկարծ, ոչ հեռու նրա դիրքի հարաւային
ծայրից, առաջ վազեցին եւ տեղի ունեցած ի-
րարանցումի ժամանակ թշնամին տիրեց դիր-
քին: Ֆիշեր եւ կապիտան Լանգմօր վտանգա-
ւոր կերպով վերաւորված են: Ֆիշերի ամբողջ
զորաւորը, մօտ 850 մարդ, առկալված էին
անձնատուր լինել թշնամուն: Ռէյմոնտի զո-
րաւածիւնը հասաւ 11 ժամին, երբ թշնամին,
բացի նրա վերջապահ փոքրաթիւ զինից, ար-
դէն նահանջել էր, թողնելով կռիւ զառաւել-
գերիններին: Բօնիական զորաւորութիւնը, որ
գերի ընկաւ Ռէյմոնտի ձեռքը, վերաւոր-
ված է:

ՄԻԼԱՆ. Անիշխանական Լուիջի Գալտի,
որպէս Բրէշիի աջակից Հոմբերտ Թագաւորի
պալանտան գործում, երգութեաների կողմից,
նրա բացակայութեամբ կայացած վճռով, դա-
տապարտվեց ցմահ բանտարկութեան:

ԳԱՐԻԶ. Պատգամաւորներ ժողով: Փոխա-
ռութեան վերաբերեալ օրինադրի առաջին յո-
դուածը ընդունվեց: Վիճաբանութիւնների շա-
րունակութիւնը տեղի կունենայ վաղը:

ԳԱՐԻԶ. Պատգամաւորների ժողովը, 295
ձայների մեծամասնութեամբ 249-ի դէմ, ըն-
դունեց փոխառութեան վերաբերեալ օրինա-
դիրը կառավարութեան կողմից պահանջված
գումարի չափով, այսինքն 265 միլիոն ֆրանկով:

Պարագր. ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչներ՝ ԲԱՆԴՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄԱՆԻԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կռկիւ, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե գ օ ր, բ ա ց ի Կ ի ր ա կ ի օ ր ե ր ի ց:
Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբերու-
թեան, վերաբերեալ օրինադրի առաջին յո-
դուածը, ընդունվեց: Վիճաբանութիւնների շա-
րունակութիւնը տեղի կունենայ վաղը:

Կ. Մ. ՊԱՅԿԱՆԻ—9—10 ժ. աշխ. ներքին եւ
ներաւորին:

Կ. Մ. ՊԱՅԿԱՆԻ—12—1 ժ. ակնթիւ, թիւ 4 կ-
կորդի:

Զ. Մ. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11—12 ժ. կանանց եւ երե-
խանց հիւանդ.

Ս. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1/2 ժ. ներքին եւ երե-
խանց:

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

Ն. Ն. ՌԱՍՏԱՐԵԿԱՎ—5—6 ժ. վերաբերութեան եւ
մարթն:

Ս. Ն. ԵՄԱԿԱՎԵԼԻ—6—7 ժ. ներքին (էլեկ-
տրաւոր), վերքի եւ մարթն:

Պ. Ա. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—7—7/2 ժ. ներքին եւ երե-
խանց:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7/2—8 ժ.
Վաղ 50 կ. չափերը ձրի համախորհրդի (կօն-
սիլուսի) եւ օպերացիայի համար առանձին:

Պ. Յ. ՍԱՎԱԿԵԱՆ—առնի, ծագական եւ բժշ-
կական մարմնավարդ, դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերաբերեալ:

Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարաններով եւ էլեկտրական մե-
քեններով, ժամանակաւ:

**ԲԳԻ, ԲԹԻ, ԱԿԱՆՁԻ ԵՒ ԿՐԾԳԻ ՀԻՄԱՆ-
ԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Շերիւսկայա, Վ. 12.

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ
Ա. Մ. ԽԱՆ-ԱՂԵԱՆ

Հնդունում է հիւանդներին առաւօտեան ժամի
9-ից մինչեւ 2-ը, երեկոյեան 4-ից մինչեւ 8-ը:
Ելիզաւետինսկայա փ. ա. № 5 Միլովի:

1—1

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
ԳՐԱԽԱՆԻԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Ս. ԷՂՄԻՃՅԱՆԻ ԺՈՅԻ ՕՐԱԳՈՅ 20 կ.

ՇԵՐԱԿ » » 20 կ.

» » » (տախտակով) 50 կ.

Գ. ա. ք. ԱՂԱՆԵԱՆԻ ՎԱՄԻՐ ՕՐԱԳ. » 50 կ.

» » » ժոյի » 20 կ.

Ս. ԶԱԿԵԱՆԻ » » 20 կ.

» » » (տախտ.) 50 կ.

» » » սեղանի » 30 կ.

» » » **Армянский Календарь** 20 կ.

Գ. Մ. ԶԱԿԵԱՆԻ ՕՐԱԳՈՅՆԵՐԻ ՎԱՆԵԱՐ մեղ
մօտ է: Օրագոյնների գումարով գնողներին
զիջումն կը լինի:

Ստացված են հետեւեալ նոր գրքերը.

Ֆարաբի Գարգնիքը, Թարգմ. Ս. Մ. 1 ր.

**Սօկրատես Արարատիկի եկեղեցական պատ-
մութիւնը, Մ. վարդ. Տէր-Մովս. 2 ր.**

**Բնական պատմութիւն Ժ. Դարու հայ
պարութեան, Մ. Յովհաննիսեանի, հրա-
տարակութիւն (Բանասէրի) 2 ր.**

Էպիկուրի պարտեզը, Թարգ. Ա. Չ. 50 կ.

**Էրիւովի առակները, Լուսինեան, պատկերա-
գրագ, 315 երես 15 կ.**

**Դիմել՝ Тифлисть, Книжный магазинъ «Гу-
тебергъ», Г. Галустьян, Лорисъ-Меликов-
ская, № 11.**

2—3

Մամուլի տակից դուրս եկաւ եւ վաճառվում է
Թիֆլիսի Կենտրոնական գրադատանոցում

ՇԻՐԱՆԱՋԱՆԻ

„Ն Ա Մ Ո Ւ Ս“

Վէպի երկրորդ տպագրութիւնը: Գ 1 ր.

Նոյն գրառանքը վաճառվում են Շիրվանշադի եւ
հետեւեալ աշխատութիւնները.—«Բառ», Վէպ,
1 ր. 50 կ., «Արաքսի Դիմապատկեր» (Սակաւ.) 2 ր. 50 կ.,
«Ցաւագրք»—գ. 50 կ., «Ջուր յոյսեր»
վէպ—գ. 1 ր., «Վէպիկներ»—գ. 40 կ. եւ
«Էրաւ»—գ. 30 կ.: Գրադատանքներն եւ գու-
մարով գնողներին զիջումն է լինում:

**Դիմել՝ Тифлисть, въ Центральную книж-
ную торговлю.** (Կ.) 10—10

Ա.Տ.Ա.Մ.Ն.Ա.Բ.Ո.Յ.Ժ

Լեռն Կարապետեան

Դարձանում է առաւինը, չինում է պլոմբեր,
ռոկէ պակներ արձանների վրա նստացնելու
եւ կեղծ առաւինը ռոկէ եւ կոտնուկէ պատ-
մութեաների վրա:

Հնդունում է հիւանդներին ժամը 9-ից առա-
ւօտեան մինչեւ ժամը 7 երեկոյեան:

Սօյալական փողոցի վրա, առին Միլովի-
փ. № 6. 17—30

ՅՈՎԱԿԻՄ ՄԱՆՈՒՄԵՆՏԻ

ԲԱՂՂԱԴԻ ԹԵՐԱՍԻ ՍԵՐՍ

ՊԱՏՐԱՍՏԱՅ ՊԱՏԵՐՈՒ ՍՈՍՏԵՐՈՎ

Целлюлярная гrena, приготовленная по сис-
темѣ Пастера.

Կարելի է դիմել՝ Тифлисть, Лорисъ-Мели-
ковская ул. д. № 11. Галустьянъ.

Կամ Черезъ Ордубаты, село Мегры, Іоаннѣ
Малуянцѣ. (Կ.) 11—15

ԲԺԻՇԿ Ա. ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄՈՐԹՈՒ ՀԻՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաւօտեան ժամը 12—2

Երեկոյեան ժամը 5—8

Սօյալական փողոցի վրա, առին Միլովի-
փ. № 41. 5—10

ՄԻ ԴՐՈՑԱՒԱՐՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ցանկանում է պարագի պատրաստական դա-
տարանների աշակերտների հետ բոլոր առար-
կաներից՝ իրեն ընկալելու: Ստանձնում է
նոյնպէս այլ եւ այլ ժամանակաւոր յանձնարա-
րութիւններ—սրբագրութիւն, արտագրութիւն
եւ այլն:

Հասցէն հարցնել է ժամագին գրադարանում:
5—5

**Թիֆլիսի Նաւթարդիւնարական Ընկերութեան
Վարչութիւնը**

Գաւառ ունի յայտարարել ի գիտութիւն պ. պ. փայտաբերի, որ համաձայն 15 փայտա-
բերի յայտարարութեան, չորեքշաբթի, նոյնմբերի 21-ին, երեկոյեան ժամը 8-ին, նշանակված է

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ԴԱՂԻՃՈՒՄ

Զբաղմունքի առարկաներն են.—1) Ընկերութիւնը, համաձայն պայմանագրի 37-րդ յո-
դուածի, ակցիոներական դարձնելու հարցը:

2) Վարչութեան գործունէութեան համար ինտորուկցիա կազմակերպելու հարցը:

3) Վարչութեան գեկուցումը Եղբայր Մովսէսեանների առեւտրական տան հետ կապած
պայմանագրի վերաբերեալ

(7, 11, 14 ն.) 8—8

Բ Ա Յ Վ Ա Մ Է Բ Ա Յ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳՐԱԶՄԱՎԵՊՈՒ

1902 տարւոյ

Առանց մանրամասն բացատրութեան, ներկայ յայտարարութեամբ՝ կը ծանուցանենք, որ
«Բազմավէպ» մեր ժողովրդեան զարգացման եւ յառաջդիմութեան համար, գրական ամեն
մասնաճիւղի վերաբերեալ յօդուածներ կը պարունակէ. եւ առաջիկայ տարեշրջանով, մասդիր
ենք ընթերցասէր ժողովրդեան պահանջներուն դեռ աւելի կարեւորութիւն տալ: Մեր եռա-
մայ կերպարանափոխեալ նոր յրջաններուն մէջ, ցոյց տուինք որ մեր գուռ նպատակն է ոչ
մի քանի բանասէրներու քմահաճոյք պատճառել, այլ մերձեցաւ մեր հասարակութեան մեծ
զանգուածին—ժողովրդեան եւ անոր օգտին ծառայել, որչափ որ կը ներէ մեր աշխատակցաց
ձեռնհասութիւնը: Ուրախ ենք ըսելու, որ ըստ վկայութեան գրեթէ մեր ամեն թերթերու, կը
համարուինք հաւատարիմ միացած ըլլալ մեր գաղափարին եռամայ գործադրութեան մէջ:

Կը շարունակենք մեր բաժանորդաց «Գեղունի»-ի եւ «Միթար»-այ նման բացառիկ
նուէրներ տալ: Նմանապէս այդ նուէրները գեղարուեստական գրական տեսակետով կը ջա-
նանք աւելի հետաքրքրական ներկայացնելու:

Սյը բացառիկ նոր պատկերազարդ պրակը կը կրէ իր առաջին

«Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի»

անունը, որ պիտի հրատարակվի «Որունի»-ի մեծութեամբ, միաթերթ, քառաւայ եռաթիւն եւ
յառաջ ծածկով:

Եւ այս նորահաստա գեղարուեստական թերթին ամենէն նուիրական նպատակն է, շա-
րունակարար, առանց կրօնի խտրութեան՝ նպատակ ազգիս սովորաւոր ծնողազուրկ տանե-
րուն, որոնց խնայարութիւն մամուլով եւ ժողովուրդը բաժանորդագրութեամբ պարտական
ենք օգնութեան հասնել, որչափ որ կարելի է:

Գեղունին կը տպենք 3000 օրինակ, եկամուտին կէսը կը յատկացնենք ազգային օր-
երուն:

Այս նոր թերթը պիտի պարունակէ ժողովրդական ժամանակակից տեղեկութիւններ, հե-
տաքրքրական վէպեր, նշանաւոր ազգայնոց պատկերազարդ կենսագրութիւններ, ազգային եւ օ-
տար ազգի նշանաւոր նկարչաց գեղեցիկ գործոց պատկերներ, եւ այլն:

Գաղափարաւոր «Գեղունի» թերթը կը հրատարակուի երկու ամիսը մէկ անգամ:

Տարեկան բաժնեգինն է 3 ֆրանկ. առաւինայ կարող են յղել 1 րուրի եւ 50 կօպէկի
նամակադրով: Բազմավէպը բաժանորդը, եթէ կը փափաքէ չը գրկուի այդ նուէրէն, կը
խնդրենք որ «Բազմավէպ» բաժնեգինն (10 ֆր.) հետ, պարզ 50 կօպէկի նամակադրով համար 1 ֆը-
րանկ աւելի յղեն, այսինքն 11 ֆրանկ (առաւինայ 4 րուրի եւ 50 կօպէկի նամակադրով):

Ով որ «Գեղունի» թերթին համար հայ գեղարուեստի վերաբերեալ պատկերներ, կամ
տեղեկութիւններ յղէ, նոյն պրակը ձրի կը ստանալ:

Մեր հասցէն. Rédaction de la Revue «BZMAVEB»
(St. Lazare) VENISE

(Italie) 2—3

Հոյս տեսնել եւ վաճառվում են

Կ Ա Ր Ա Պ Ե Տ Ա Փ Ի Ն Ե Ա Ն Ի

1902 թ.

ՊԱՏԻ ԵՒ ՄՈՑԻ (ՇԵՐԱԿ)

Օ Ր Ա Ց Ո Ց Ց Ն Ե Ր Ը

Մոցի օրագոյնը զարգարված է Գ. եպ. Սրուանձեանի,
Գամառ-Բաթիկայի, Գ. Արծրունու եւ Գ. Զանգեանի պատկերներ-
ով: Ունի բոլորովին նոր հետաքրքրական յաւելումներ ամենաօգտա-
կար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երազան
եւ նոր, զուարճալի վիճակահան:

Գաւառ օրագոյնի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր
մտքեր, հայոց եւ եկեղեցական պատմութիւնից հատուածներ, բոլո-
րովին նոր, ծիծաղալար ծաղիկներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ
ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէլներ,
ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտառե-
ւոյն, բժշկական, արհեստագործական եւ այլ օգտակար եւ հետա-
քրքիր տեղեկութիւններ: Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտօգրաֆիա-
րում 15 գոյնով: Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը տպագրված առանձին թեր-
թով կարող են ստանալ ձրի:

Գները ամեն տեղ ծոցին—20 կ., պատին—50 կ., գումարով գնողներին լինում է զի-
ջում: Դիմել՝ Александрополь. Карапетъ Апиняцъ կամ Alexandropole, Karapet Apinian
(Caucase). Ցանկացողները թող չտապեն, որ իր ժամանակին կարողանանք պատուէրները
ճշգրտեալ կատարել:

(Կ. Ն.) 7—16

Ստացել ենք Մովսէլայի յայտնի առեւտրական տուն

Ա. եւ Բ. Ր Օ Ղ Է Ն Գ Վ յ Գ Է Գ

ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՂԱՄԱՐԴԱՆՑ ԵՒ ԵՐԵՒԱՆԵՐԻ

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Թէ ապրանքի յատկութեան եւ թէ գների է ծանոթեան կողմից ոչ ոք չէ կարող մրցել Ցան-
կացողները կարող են անձամբ համոզվել:

Հնդունում ենք նաեւ ամեն տեսակ ՊԱՏՐԱՍՏԻ, արտասանմանի կտորնե-
րից (матерія) Դիմել:

ԵՂԲ. Վ. եւ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ

Դիմելու արժեքով վրա, առաջին զինապետի հանդէպ:

3—10

ЖЖЕНЫЙ КОФЕ

ПРОДАЖА ВЕЗДЬ